ՆԱԽԱԳԻԾ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

6 մայիսի 2011թ. N ---- - Ն

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

## ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2010 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 23-Ի N169-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ կետով և «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ կետով՝

**Երևան քաղաքի ավագանին որոշում է.**

1. Երևան քաղաքի ավագանու 2010 թվականի դեկտեմբերի 23-ի «Երևան քաղաքի 2011 թվականի բյուջեի մասին» N 169-Ն որոշմամբ հաստատված NN 2, 3, 6 և 7 հավելվածներում կատարել փոփոխություններ՝ համաձայն սույն որոշման համապատասխանաբար NN 1, 2, 3, և 4 հավելվածների:

2. Թույլատրել Երևանի քաղաքապետին Երևանի քաղաքապետարանի կարիքների համար չորրորդ աստիճանի վթարային շենքերի քանդման հետևանքով բնակտարածություններից զրկված բնակիչներին փոխհատուցում տալու նպատակով բնակարանների ձեռքբերման պայմանագրերով նախատեսել, որ բնակարանները ողջ ծավալով ձեռք են բերվում 2011 թվականին պայմանով, որ 2011 թվականին վճարվում է գնվելիք բնակարանների արժեքի մինչև 50 %–ը, իսկ մնացած մասը վճարվում է 2012 թվականին:

3. Երևանի քաղաքապետին՝ Երևանի քաղաքի 2012 թվականի բյուջեի նախագծով նախատեսել սույն որոշման 2-րդ կետով նախատեսված 2012 թվականի վճարման ենթակա գումարները:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ–ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ
«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2010 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 23-Ի N 169-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

«Երևան քաղաքի ավագանու 2010 թվականի դեկտեմբերի 23-ի N 169-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծով Երևան քաղաքի 2011 թվականի բյուջեում նախատեսվում է իրականացնել հետևյալ փոփոխությունները.

- Համաձայն «Հայաստանի Հանրապետության վարչատարածքային բաժանման մասին» ՀՀ օրենքի 6-րդ հավելվածի Երևան քաղաքի սահմանների նկարագիրը ենթարկվել է փոփոխության, ինչից ելնելով հարևան մարզերի հետ սահմանները հստակ տարանջատելու համար անհրաժեշտություն է առաջացել Երևան քաղաքի փոփոխված վարչական սահմանագծով, ներառյալ Զվարթնոց օդանավակայանը, տեղադրել նոր սահմանայուններ: Նշված աշխատանքներն իրականացնելու համար նախապատրաստվել են աշխատանքների նախահաշվային փաստաթղթերը, համաձայն որի անհրաժեշտ է 38,565.1 հազար դրամ, ինչն էլ նախատեսվում է հատկացնել սույն որոշման նախագծով,
- Երևանի քաղաքապետարանի և ՀՀ քաղաքաշինության նախարարության կողմից ուսումնասիրվել են Երևան քաղաքի թվով 9 չորրորդ կարգի քանդման ենթակա վթարային շենքերի քանդման առաջնահերթությունները: Նշված շենքերից ներկայացված տվյալներով խիստ առաջնահերթ են համարվել Երևան քաղաքի Նոր-Արեշի 35-րդ փողոցի հ.127/1 (150 բնակարան), Միսակյան հ. 3 (121 բնակարան) և Արցախի 4-րդ նրբանցք 15 (52 բնակարան) հասցեներում գտնվող հանրակացարանների շենքերը: Ներկայումս առավել հրատապ վերաբնակեցման ենթակա է Նոր-Արեշի 35-րդ փողոցի հ.127/1 հասցեի շենքը, որի վերաբնակեցման արդյունքում անհրաժեշտ մակերեսը կազմում է 4750 քառ մետր, որի համար մոտավոր հաշվարկներով կպահանջվի 855,000.0 հազար դրամ (մեկ քառակուսի մետրի համար՝ 180,0 հազար դրամ): Միաժամանակ, ուսումնասիրություններ են իրականացվում Միսակյան հ. 3 և Արցախի 4-րդ նրբանցք 15 հասցեների հանրակացարանների բնակիչների վերաբնակեցման համար՝ անհրաժեշտ մակերեսների և արժեքների ճշգրտման նպատակով: Հարկ է նշել, որ Երևանի

քաղաքապետարանի հաշվեկշռում առկա են նախկինում կառուցված շենքերից թվով 52 բնակարաններ, ինչպես նաև ներկայումս Երևանի քաղաքապետարանի կողմից Երևան քաղաքի բյուջեի հաշվին 2,500,000.0 հազար դրամի շրջանակներում կառուցվում է մեկ բազմաբնակարան շենք 126 բնակարանով, որն ըստ կապալի պայմանագրի կավարտվի 2011 թվականի դեկտեմբերի 30-ին և այս շենքում վերաբնակեցումը հնարավոր է կազմակերպել հաջորդ տարվա ընթացքում: Նշված երեք հասցեների հանրակացարանների բնակիչների վերաբնակեցման խնդիրը ամբողջությամբ 2011 թվականին լուծելու համար նախատեսվում է 2011 թվականի բյուջեում սույն որոշման նախագծով նախատեսել 1,000,000.0 հազար դրամ (շուրջ 50 %-ը), իսկ ճշգրտված արդյունքներով անհրաժեշտ գումարների մնացած մասը նախատեսել և հատկացնել Երևան քաղաքի 2012 թվականի բյուջեով:

- «Երևանի հ. 141 նախադպրոցական ուսումնական հաստատություն» ՀՈԱԿ–ը Երևան քաղաքում միակ գիշերօթիկ նախադպրոցական հաստատությունն է, որի համար հատուկ մոտեցումով լրացուցիչ ֆինանսավորում է պահանջվում: Նշված նախադպրոցական հաստատության համար սուբսիդիայի ֆինանսավորման գումարը հաշվարկվել է ընդհանուր հիմունքներով, ինչը չի բավականացնում կազմակերպության ծախսերն ամբողջությամբ իրականացնելու համար, ուստի անհրաժեշտություն է առաջացել լրացուցիչ 14,000.0 հազար դրամ տրամադրել ՀՈԱԿ–ին՝ գիշերող երեխաների ուսուցումը կազամակերպելու համար: Մեկ երեխայի հաշվով լրացուցիչ 16.0 հազար դրամ ամսական փոփոխական ծախսերի հաշվարկով:
- «Ավանի մանկապարտեզներ» ՀՈԱԿ–ի կազմում ընդգրկված են թվով 7 հիմնարկներ, որի սուբսիդավորման հաշվարկում պահպանման ծախսերը (500.0 հազ. դրամ) հաշվարկվել են մեկ կազմակերպության համար, որի արդյունքում տարվա ընթացքում ֆինանսական անբավարարություն է առաջանալու կազմակերպության ծախսերն իրականացնելու համար: Հաշվի առնելով վերոգրյալը անհրաժեշտություն է առաջացել լրացուցիչ 33,000.0 հազար դրամ հատկացնել «Ավանի մանկապարտեզներ» ՀՈԱԿ–ին՝ յուրաքանչյուր հիմնարկի հաշվով ամսական 500.0 հազար դրամ 11 ամսվա հաստատուն ծախսերի համար:

- Համաձայն Երևանի քաղաքապետի 31.03.2011 թվականի հ.1101–Ա որոշման սույն թվականի ապրիլի մեկից Երևան քաղաքում նախադպրոցական ուսումնական հաստատությունները (ՆՈՒՀ) անվճար դարձնելու արդյունքում Նորք–Մարաշ վարչական շրջանի ՆՈՒՀ–երում երեխաների հաճախումների էական աճ է արձանագրվել, ինչից ելնելով հնարավոր է տարվա վերջին վարչական շրջանի թվով 4 ՆՈՒՀ–երում (հհ. 121, 122, 123 և 124) ֆինանսական անբավարարվածություններ առաջանան: Հաշվի առնելով վերոգրյալը առաջարկվում է սույն որոշման նախագծով Նորք–Մարաշ վարչական շրջանի թվով 4 ՆՈՒՀ–երի սուբսիդավորման չափն ընդհանուր թվով ավելացնել 23,004.0 հազար դրամով:
- Երևանի քաղաքապետարանի աշխատակազմում կառուցվածքային փոփոխություններով պայմանավորված անհրաժեշտություն է առաջացել ձեռքբերել թվով 4 ծառայողական ավտոմեքենաներ՝ աշխատակազմի նոր կամ ավտոմեքենա չունեցող կառուցվածքային ստորաբաժանումների (գնումների, արտաքին ձևավորման և գովազդի, շինարարության և բարեկարգման, տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի վարչություններ) ղեկավարների համար, որի համար պահանջվում է շուրջ 28,000.0 հազար դրամ, ինչն էլ առաջարկում ենք նախատեսել որոշման նախագծով:
- Երևան քաղաքի բյուջեի մշակման գործընթացը ավտոմատացնելու նպատակով նախատեսվում է Երևանի քաղաքապետարանում ներդնել բյուջեի մշակման ծրագրային ապահովման փաթեթ, որի ձեռքբերման համար անհրաժեշտ 7,800.0 հազար դրամը նախատեսվում է հատկացնել սույն որոշման նախագծով:
- Երևանի քաղաքապետարանի աշխատակազմում նոր կառուցվածքային ստորաբաժանման ստեղծմամբ պայմանավորված սույն որոշման նախագծով ավելացվում է նաև քաղաքապետարանի աշխատավարձի ֆոնդը (աշխատավարձ, պարգևատրում և սոցիալական ապահովության վճարներ)՝ ընդհանուր թվով 15,720.0 հազար դրամ:
- Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի նոր ստեղծված ստորաբաժանումներին գրասենյակային գույքով և տեխնիկական հագեցվածությունն ապահովելու նպատակով նախատեսվում է որոշման

նախագծով հատկացնել 4,000.0 հազար դրամ՝ համակարգչային տեխնիկա և կահույք ձեռքբերելու նպատակով:

- Երևան քաղաքի 2010 թվականի բյուջեով «Առողջապահական օբյեկտների հիմնանորոգում» ծրագրով իրականացվել են «Նորք-Մարաշ» ՓԲԸ–ի նոր մասնաշենքի կառուցման առաջին փուլի աշխատանքները՝ 99,714.8 հազար դրամի: Բժշկական կենտրոնի մասնաշենքի կառուցման աշխատանքներն երկրորդ փուլով ավարտին հասցնելու համար համաձայն նախագծանախահաշվային փաստաթղթերի անհրաժեշտ է 58,919.3 հազար դրամ, ինչն էլ հաշվի առնելով նախատեսվում է հատկացնել որոշման նախագծով:

Վերոգրյալ ծախսային ուղղությունները նախատեսվում է իրականացնել համայնքային սեփականություն հանդիսացող հողերի օտարումից մուտքերը՝ 1,137,284.4 հազար դրամ ավելացնելու, ինչպես նաև՝ 85,724.0 հազար դրամ պահուստային միջոցների վերաբաշխման հաշվին:

Ելնելով վերոգրյալից առաջարկվում է Երևան քաղաքի ավագանու 2010 թվականի դեկտեմբերի 23-ի «Երևան քաղաքի 2011 թվականի բյուջեի մասին» N 169-Ն որոշման մեջ կատարել համապատասխան փոփոխություններ:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ N 1

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2010 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 23-Ի N 169-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Երևան քաղաքի ավագանու 2010 թվականի դեկտեմբերի 23-ի N 169-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունման կամ փոփոխության անհրաժեշտություն չի առաջանում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

# Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք N 2

## «ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2010 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 23-Ի N 169-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

«Երևան քաղաքի ավագանու 2010 թվականի դեկտեմբերի 23-ի N 169-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունմամբ Երևան քաղաքի 2011 թվականի բյուջեի մուտքերն ու ծախսերն համապատասխանաբար ավելանում են 1,137,284.4 հազար դրամով:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

Հավելված N 1
Երևան քաղաքի ավագանու
2011 թվականի ---------------- ---ի
N ----- -Ն որոշման

# ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2010 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 23-Ի N 169-Ն ՈՐՈՇՄԱՆ N 2 ՀԱՎԵԼՎԱԾՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

*(հազար դրամներով)*

| Տողի NN | Բաժին | Խումբ | Դաս | Բյուջետային ծախսերի գործառական դասակարգման բաժինների, խմբերի և դասերի անվանումները | Ընդամենը | այդ թվում՝ (ավելացումները նշված են դրական նշանով, իսկ նվազեցումները փակագծերում) | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | վարչական բյուջե | ֆոնդային բյուջե |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 |
| | | | | ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ | - | - | - |
| 2100 | 01 | 0 | 0 | ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒՅԹԻ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ | 55 520,0 | 15 720,0 | 39 800,0 |
| | | | | այդ թվում՝ | | | |
| 2110 | 01 | 1 | 0 | *Օրենսդիր և գործադիր մարմիններ, պետական կառավարում, ֆինանսական և հարկաբյուջետային հարաբերություններ, արտաքին հարաբերություններ* | 55 520,0 | 15 720,0 | 39 800,0 |
| | | | | որից՝ | | | |
| 2111 | 01 | 1 | 1 | Օրենսդիր և գործադիր մարմիններ,պետական կառավարում | 55 520,0 | 15 720,0 | 39 800,0 |
| 2400 | 04 | 0 | 0 | ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ | (1 098 719,3) | - | (1 098 719,3) |
| | | | | այդ թվում՝ | | | |
| 2490 | 04 | 9 | 0 | *Տնտեսական հարաբերություններ (այլ դասերին չպատկանող)* | (1 098 719,3) | - | (1 098 719,3) |
| | | | | որից՝ | | | |
| 2491 | 04 | 9 | 1 | Տնտեսական հարաբերություններ (այլ դասերին չպատկանող) | (1 098 719,3) | - | (1 098 719,3) |
| 2600 | 06 | 0 | 0 | ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿՈՄՈՒՆԱԼ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ | 1 000 000,0 | - | 1 000 000,0 |
| | | | | այդ թվում՝ | | | |
| 2610 | 06 | 1 | 0 | *Բնակարանային շինարարություն* | 1 000 000,0 | - | 1 000 000,0 |
| | | | | որից՝ | | | |
| 2611 | 06 | 1 | 1 | Բնակարանային շինարարություն | 1 000 000,0 | - | 1 000 000,0 |
| 2700 | 07 | 0 | 0 | ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ | 58 919,3 | - | 58 919,3 |
| | | | | այդ թվում՝ | | | |
| 2760 | 07 | 6 | 0 | *Առողջապահություն (այլ դասերին չպատկանող)* | 58 919,3 | - | 58 919,3 |
| | | | | որից՝ | | | |
| 2761 | 07 | 6 | 1 | Առողջապահական հարակից ծառայություններ և ծրագրեր | 58 919,3 | - | 58 919,3 |
| 2900 | 09 | 0 | 0 | ԿՐԹՈՒԹՅՈՒՆ | 70 004,0 | 70 004,0 | - |
| | | | | այդ թվում՝ | | | |
| 2910 | 09 | 1 | 0 | *Նախադպրոցական և տարրական ընդհանուր կրթություն* | 70 004,0 | 70 004,0 | - |
| | | | | որից՝ | | | |
| 2911 | 09 | 1 | 1 | Նախադպրոցական կրթություն | 70 004,0 | 70 004,0 | - |
| 3100 | 11 | 0 | 0 | ՀԻՄՆԱԿԱՆ ԲԱԺԻՆՆԵՐԻՆ ՉԴԱՍՎՈՂ ՊԱՀՈՒՍՏԱՅԻՆ ՖՈՆԴԵՐ | (85 724,0) | (85 724,0) | - |
| | | | | այդ թվում՝ | | | |
| 3110 | 11 | 1 | 0 | *ՀՀ կառավարության և համայնքների պահուստային ֆոնդ* | (85 724,0) | (85 724,0) | - |
| | | | | որից՝ | | | |
| 3112 | 11 | 1 | 2 | ՀՀ համայնքների պահուստային ֆոնդ | (85 724,0) | (85 724,0) | - |

Հավելված N 2
Երևան քաղաքի ավագանու
2011 թվականի ---------------- ---ի
N ----- -Ն որոշման

# ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2010 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 23-Ի N 169-Ն ՈՐՈՇՄԱՆ N 3 ՀԱՎԵԼՎԱԾՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

(հազար դրամներով)

| Տողի NN | Բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների անվանումները | NN | Ընդամենը | այդ թվում՝ (ավելացումները նշված են դրական նշանով, իսկ նվազեցումները փակագծերում) | |
|---|---|---|---|---|---|
| | | | | վարչական բյուջե | ֆոնդային բյուջե |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 |
| 4000 | ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ | | - | - | - |
| | այդ թվում՝ | | | | |
| 4050 | Ա. ԸՆԹԱՑԻԿ ԾԱԽՍԵՐ՝ | x | - | - | - |
| | այդ թվում՝ | | | | |
| 4100 | 1.1 ԱՇԽԱՏԱՆՔԻ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆ | x | 15 720,0 | 15 720,0 | - |
| | այդ թվում՝ | | | | |
| 4110 | *ԴՐԱՄՈՎ ՎՃԱՐՎՈՂ ԱՇԽԱՏԱՎԱՐՁԵՐ ԵՎ ՀԱՎԵԼԱՎՃԱՐՆԵՐ* | x | 13 552,0 | 13 552,0 | - |
| | որից՝ | | | | |
| 4111 | -Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ | 4111 | 12 320,0 | 12 320,0 | - |
| 4112 | - Պարգևատրումներ, դրամական խրախուսումներ և հատուկ վճարներ | 4112 | 1 232,0 | 1 232,0 | - |
| 4130 | *ՓԱՍՏԱՑԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒԹՅԱՆ ՎՃԱՐՆԵՐ* | x | 2 168,0 | 2 168,0 | - |
| | որից՝ | | | | |
| 4131 | -Սոցիալական ապահովության վճարներ | 4131 | 2 168,0 | 2 168,0 | - |
| 4400 | 1.4 ՍՈՒԲՍԻԴԻԱՆԵՐ | x | 70 004,0 | 70 004,0 | - |
| | այդ թվում՝ | | | | |
| 4410 | *ՍՈՒԲՍԻԴԻԱՆԵՐ ՊԵՏԱԿԱՆ (ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ) ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ* | x | 70 004,0 | 70 004,0 | - |
| | որից՝ | | | | |
| 4411 | -Սուբսիդիաներ ոչ ֆինանսական պետական (համայնքային) կազմակերպություններին | 4511 | 70 004,0 | 70 004,0 | - |
| 4700 | *1.7 ԱՅԼ ԾԱԽՍԵՐ* | x | (85 724,0) | (85 724,0) | - |
| | այդ թվում՝ | | | | |
| 4770 | *ՊԱՀՈՒՍՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐ* | x | (85 724,0) | (85 724,0) | - |
| | որից՝ | | | | |
| 4771 | -Պահուստային միջոցներ | 4891 | (85 724,0) | (85 724,0) | - |
| 5000 | Բ. ՈՉ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐԻ ԳԾՈՎ ԾԱԽՍԵՐ | x | 1 137 284,4 | - | 1 137 284,4 |
| | այդ թվում՝ | | | | |
| 5100 | 1.1. ՀԻՄՆԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ | x | 1 137 284,4 | - | 1 137 284,4 |
| | այդ թվում՝ | | | | |
| 5110 | *ՇԵՆՔԵՐ ԵՎ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ* | x | 1 097 484,4 | - | 1 097 484,4 |
| | որից՝ | | | | |
| 5111 | - Շենքերի և շինությունների ձեռք բերում | 5111 | 1 000 000,0 | - | 1 000 000,0 |
| 5113 | - Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում | 5113 | 97 484,4 | - | 97 484,4 |
| 5120 | *ՄԵՔԵՆԱՆԵՐ ԵՎ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐ* | x | 32 000,0 | - | 32 000,0 |
| | որից՝ | | | | |
| 5121 | - Տրանսպորտային սարքավորումներ | 5121 | 28 000,0 | - | 28 000,0 |
| 5122 | - Վարչական սարքավորումներ | 5122 | 4 000,0 | - | 4 000,0 |
| 5130 | *ԱՅԼ ՀԻՄՆԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ* | x | 7 800,0 | - | 7 800,0 |
| | որից՝ | | | | |
| 5132 | - Ոչ նյութական հիմնական միջոցներ | 5132 | 7 800,0 | - | 7 800,0 |
| 6000 | Գ. ՈՉ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐԻ ԻՐԱՑՈՒՄԻՑ ՄՈՒՏՔԵՐ | x | (1 137 284,4) | - | (1 137 284,4) |
| | այդ թվում՝ | | | | |

| Տողի NN | Բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների անվանումները | NN | Ընդամենը | այդ թվում՝ (ավելացումները նշված են դրական նշանով, իսկ նվազեցումները փակագծերում) | |
|---|---|---|---|---|---|
| | | | | վարչական բյուջե | ֆոնդային բյուջե |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 |
| 6400 | ՉԱՐՏԱԴՐՎԱԾ ԱԿՏԻՎՆԵՐԻ ԻՐԱՑՈՒՄԻՑ ՄՈՒՏՔԵՐ՝ | x | (1 137 284,4) | - | (1 137 284,4) |
| | այդ թվում՝ | | | | |
| 6410 | *ՀՈՂԻ ԻՐԱՑՈՒՄԻՑ ՄՈՒՏՔԵՐ* | 8411 | (1 137 284,4) | - | (1 137 284,4) |

Հավելված N 3
Երևան քաղաքի ավագանու
2011 թվականի ---------------- ---ի
N ----- -Ն որոշման

# ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2010 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 23-Ի N 169-Ն ՈՐՈՇՄԱՆ N 6 ՀԱՎԵԼՎԱԾՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

*(հազար դրամներով)*

| Տողի NN | Բաժին | Խումբ | Դաս | Բյուջետային ծախսերի գործառական դասակարգման բաժինների, խմբերի և դասերի, ինչպես նաև բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների անվանումները | Հոդված NN | Ընդամենը | այդ թվում՝ (ավելացումները նշված են դրական նշանով, իսկ նվազեցումները փակագծերում) | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | | վարչական բյուջե | ֆոնդային բյուջե |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 |
| | | | | **ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ** | | **-** | **-** | **-** |
| 2100 | 01 | 0 | 0 | **ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒՅԹԻ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ** | | **55 520,0** | **15 720,0** | **39 800,0** |
| | | | | այդ թվում՝ | | | | |
| 2110 | 01 | 1 | 0 | *Օրենսդիր և գործադիր մարմիններ, պետական կառավարում, ֆինանսական և հարկաբյուջետային հարաբերություններ, արտաքին հարաբերություններ* | | 55 520,0 | 15 720,0 | 39 800,0 |
| | | | | որից՝ | | | | |
| 2111 | 01 | 1 | 1 | Օրենսդիր և գործադիր մարմիններ,պետական կառավարում | | 55 520,0 | 15 720,0 | 39 800,0 |
| | | | | այդ թվում՝ | | | | |
| | | | | *1. Կառավարման մարմնի պահպանում* | | *55 520,0* | *15 720,0* | *39 800,0* |
| | | | | -Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ | 4111 | 12 320,0 | 12 320,0 | - |
| | | | | - Պարգևատրումներ, դրամական խրախուսումներ և հատուկ վճարներ | 4112 | 1 232,0 | 1 232,0 | - |
| | | | | -Սոցիալական ապահովության վճարներ | 4131 | 2 168,0 | 2 168,0 | - |
| | | | | - Տրանսպորտային սարքավորումներ | 5121 | 28 000,0 | - | 28 000,0 |
| | | | | - Վարչական սարքավորումներ | 5122 | 4 000,0 | - | 4 000,0 |
| | | | | -Ոչ նյութական հիմնական միջոցներ | 5132 | 7 800,0 | - | 7 800,0 |
| 2400 | 04 | 0 | 0 | **ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ** | | **(1 098 719,3)** | **-** | **(1 098 719,3)** |
| | | | | այդ թվում՝ | | | | |
| 2490 | 04 | 9 | 0 | *Տնտեսական հարաբերություններ (այլ դասերին չպատկանող)* | | (1 098 719,3) | - | (1 098 719,3) |
| | | | | որից՝ | | | | |
| 2491 | 04 | 9 | 1 | Տնտեսական հարաբերություններ (այլ դասերին չպատկանող) | | (1 098 719,3) | - | (1 098 719,3) |
| | | | | այդ թվում՝ | | | | |
| | | | | *5. Ոչ ֆինանսական ակտիվների օտարումից մուտքեր* | | *(1 137 284,4)* | - | *(1 137 284,4)* |
| | | | | -Հողի իրացումից մուտքեր | 8411 | (1 137 284,4) | - | (1 137 284,4) |

| Տողի NN | Բաժին | Խումբ | Դաս | Բյուջետային ծախսերի գործառական դասակարգման բաժինների, խմբերի և դասերի, ինչպես նաև բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների անվանումները | Հոդված NN | Ընդամենը | այդ թվում՝ (ավելացումները նշված են դրական նշանով, իսկ նվազեցումները փակագծերում) | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | | վարչական բյուջե | ֆոնդային բյուջե |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 |
| | | | | *6. Երևան քաղաքի վարչական սահմանների ճշգրտում* | | *38 565,1* | - | *38 565,1* |
| | | | | - Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում | 5113 | 38 565,1 | - | 38 565,1 |
| 2600 | 06 | 0 | 0 | ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿՈՄՈՒՆԱԼ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ | | 1 000 000,0 | - | 1 000 000,0 |
| | | | | այդ թվում՝ | | | | |
| 2610 | 06 | 1 | 0 | *Բնակարանային շինարարություն* | | 1 000 000,0 | - | 1 000 000,0 |
| | | | | որից՝ | | | | |
| 2611 | 06 | 1 | 1 | Բնակարանային շինարարություն | | 1 000 000,0 | - | 1 000 000,0 |
| | | | | այդ թվում ՝ | | | | |
| | | | | *4. Չորրորդ աստիճանի վթարային շենքերի քանդման հետևանքով բնակտարածություններից զրկված բնակիչների փոխհատուցման համար բնակարանների ձեռքբերում* | | 1 000 000,0 | - | 1 000 000,0 |
| | | | | - Շենքերի և շինությունների ձեռք բերում | 5111 | 1 000 000,0 | - | 1 000 000,0 |
| 2700 | 07 | 0 | 0 | ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ | | 58 919,3 | - | 58 919,3 |
| | | | | այդ թվում՝ | | | | |
| 2760 | 07 | 6 | 0 | *Առողջապահություն (այլ դասերին չպատկանող)* | | 58 919,3 | - | 58 919,3 |
| | | | | որից՝ | | | | |
| 2761 | 07 | 6 | 1 | Առողջապահական հարակից ծառայություններ և ծրագրեր | | 58 919,3 | - | 58 919,3 |
| | | | | այդ թվում՝ | | | | |
| | | | | *1. Առողջապահական օբյեկտների հիմնանորոգում* | | *58 919,3* | - | *58 919,3* |
| | | | | - Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում | 5113 | 58 919,3 | - | 58 919,3 |
| 2900 | 09 | 0 | 0 | ԿՐԹՈՒԹՅՈՒՆ | | 70 004,0 | 70 004,0 | - |
| | | | | այդ թվում՝ | | | | |
| 2910 | 09 | 1 | 0 | *Նախադպրոցական և տարրական ընդհանուր կրթություն* | | 70 004,0 | 70 004,0 | - |
| | | | | որից՝ | | | | |
| 2911 | 09 | 1 | 1 | Նախադպրոցական կրթություն | | 70 004,0 | 70 004,0 | - |
| | | | | այդ թվում ՝ | | | | |
| | | | | *1. Նախադպրոցական ուսուցում* | | *70 004,0* | *70 004,0* | - |
| | | | | -Սուբսիդիաներ ոչ ֆինանսական պետական (համայնքային) կազմակերպություններին | 4511 | 70 004,0 | 70 004,0 | - |
| 3100 | 11 | 0 | 0 | ՀԻՄՆԱԿԱՆ ԲԱԺԻՆՆԵՐԻՆ ՉԴԱՍՎՈՂ ՊԱՀՈՒՍՏԱՅԻՆ ՖՈՆԴԵՐ | | (85 724,0) | (85 724,0) | - |
| | | | | այդ թվում՝ | | | | |
| 3110 | 11 | 1 | 0 | *ՀՀ կառավարության և համայնքների պահուստային ֆոնդ* | | (85 724,0) | (85 724,0) | - |

| Տողի NN | Բաժին | Խումբ | Դաս | Բյուջետային ծախսերի գործառական դասակարգման բաժինների, խմբերի և դասերի, ինչպես նաև բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների անվանումները | Հոդված NN | Ընդամենը | այդ թվում՝ (ավելացումները նշված են դրական նշանով, իսկ նվազեցումները փակագծերում) | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | | վարչական բյուջե | ֆոնդային բյուջե |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 |
| | | | | որից՝ | | | | |
| 3112 | 11 | 1 | 2 | ՀՀ համայնքների պահուստային ֆոնդ | | (85 724,0) | (85 724,0) | - |
| | | | | այդ թվում՝ | | | | |
| | | | | -Պահուստային միջոցներ | 4891 | (85 724,0) | (85 724,0) | - |

Հավելված N 4
Երևան քաղաքի ավագանու
2011 թվականի ---------------- ---ի
N ----- -Ն որոշման
*Աղյուսակ 1*

ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2010 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 23-Ի N 169-Ն ՈՐՈՇՄԱՆ N 7 ՀԱՎԵԼՎԱԾԻ N 1 ԱՂՅՈՒՍԱԿՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

*(հազար դրամներով)*

| Տողի NN | Բաժին | Խումբ | Դաս | Բյուջետային ծախսերի գործառական դասակարգման բաժինների, խմբերի և դասերի, ինչպես նաև բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների անվանումները | Հոդված NN | Ընդամենը | այդ թվում՝ (ավելացումները նշված են դրական նշանով, իսկ նվազեցումները փակագծերում) | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | | վարչական բյուջե | ֆոնդային բյուջե |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 |
| | | | | ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ | | (70 004,0) | (70 004,0) | - |
| 2100 | 01 | 0 | 0 | ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒՅԹԻ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ | | 55 520,0 | 15 720,0 | 39 800,0 |
| | | | | այդ թվում՝ | | | | |
| 2110 | 01 | 1 | 0 | *Օրենսդիր և գործադիր մարմիններ, պետական կառավարում, ֆինանսական և հարկաբյուջետային հարաբերություններ, արտաքին հարաբերություններ* | | 55 520,0 | 15 720,0 | 39 800,0 |
| | | | | որից՝ | | | | |
| 2111 | 01 | 1 | 1 | Օրենսդիր և գործադիր մարմիններ,պետական կառավարում | | 55 520,0 | 15 720,0 | 39 800,0 |
| | | | | այդ թվում՝ | | | | |
| | | | | *1. Կառավարման մարմնի պահպանում* | | *55 520,0* | *15 720,0* | *39 800,0* |
| | | | | -Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ | 4111 | 12 320,0 | 12 320,0 | - |
| | | | | - Պարգևատրումներ, դրամական խրախուսումներ և հատուկ վճարներ | 4112 | 1 232,0 | 1 232,0 | - |
| | | | | -Սոցիալական ապահովության վճարներ | 4131 | 2 168,0 | 2 168,0 | - |
| | | | | -Տրանսպորտային սարքավորումներ | 5121 | 28 000,0 | - | 28 000,0 |
| | | | | -Վարչական սարքավորումներ | 5122 | 4 000,0 | - | 4 000,0 |
| | | | | -Ոչ նյութական հիմնական միջոցներ | 5132 | 7 800,0 | - | 7 800,0 |
| 2400 | 04 | 0 | 0 | ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ | | (1 098 719,3) | - | (1 098 719,3) |
| | | | | այդ թվում՝ | | | | |
| 2490 | 04 | 9 | 0 | *Տնտեսական հարաբերություններ (այլ դասերին չպատկանող)* | | (1 098 719,3) | - | (1 098 719,3) |
| | | | | որից՝ | | | | |
| 2491 | 04 | 9 | 1 | Տնտեսական հարաբերություններ (այլ դասերին չպատկանող) | | (1 098 719,3) | - | (1 098 719,3) |
| | | | | այդ թվում՝ | | | | |
| | | | | *5. Ոչ ֆինանսական ակտիվների օտարումից մուտքեր* | | *(1 137 284,4)* | - | *(1 137 284,4)* |

| Տողի NN | Բաժին | Խումբ | Դաս | Բյուջետային ծախսերի գործառական դասակարգման բաժինների, խմբերի և դասերի, ինչպես նաև բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների անվանումները | Հոդված NN | Ընդամենը | այդ թվում՝ (ավելացումները նշված են դրական նշանով, իսկ նվազեցումները փակագծերում) | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | | վարչական բյուջե | ֆոնդային բյուջե |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 |
| | | | | -Հողի իրացումից մուտքեր | 8411 | (1 137 284,4) | | (1 137 284,4) |
| | | | | *6. Երևան քաղաքի վարչական սահմանների ճշգրտում* | | *38 565,1* | - | *38 565,1* |
| | | | | - Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում | 5113 | 38 565,1 | - | 38 565,1 |
| 2600 | 06 | 0 | 0 | **ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿՈՄՈՒՆԱԼ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ** | | **1 000 000,0** | **-** | **1 000 000,0** |
| | | | | այդ թվում՝ | | | | |
| 2610 | 06 | 1 | 0 | *Բնակարանային շինարարություն* | | **1 000 000,0** | - | **1 000 000,0** |
| | | | | որից՝ | | | | |
| 2611 | 06 | 1 | 1 | Բնակարանային շինարարություն | | 1 000 000,0 | - | 1 000 000,0 |
| | | | | այդ թվում ՝ | | | | |
| | | | | *4. Չորրորդ աստիճանի վթարային շենքերի քանդման հետևանքով բնակտարածություններից զրկված բնակիչների փոխհատուցման համար բնակարանների ձեռքբերում* | | 1 000 000,0 | - | 1 000 000,0 |
| | | | | - Շենքերի և շինությունների ձեռք բերում | 5111 | 1 000 000,0 | - | 1 000 000,0 |
| 2700 | 07 | 0 | 0 | **ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ** | | **58 919,3** | **-** | **58 919,3** |
| | | | | այդ թվում՝ | | | | |
| 2760 | 07 | 6 | 0 | *Առողջապահություն (այլ դասերին չպատկանող)* | | **58 919,3** | - | **58 919,3** |
| | | | | որից՝ | | | | |
| 2761 | 07 | 6 | 1 | Առողջապահական հարակից ծառայություններ և ծրագրեր | | 58 919,3 | - | 58 919,3 |
| | | | | այդ թվում՝ | | | | |
| | | | | *1. Առողջապահական օբյեկտների հիմնանորոգում* | | *58 919,3* | - | *58 919,3* |
| | | | | - Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում | 5113 | 58 919,3 | - | 58 919,3 |
| 3100 | 11 | 0 | 0 | **ՀԻՄՆԱԿԱՆ ԲԱԺԻՆՆԵՐԻՆ ՉԴԱՍՎՈՂ ՊԱՀՈՒՍՏԱՅԻՆ ՖՈՆԴԵՐ** | | **(85 724,0)** | **(85 724,0)** | **-** |
| | | | | այդ թվում՝ | | | | |
| 3110 | 11 | 1 | 0 | *ՀՀ կառավարության և համայնքների պահուստային ֆոնդ* | | **(85 724,0)** | **(85 724,0)** | - |
| | | | | որից՝ | | | | |
| 3112 | 11 | 1 | 2 | ՀՀ համայնքների պահուստային ֆոնդ | | (85 724,0) | (85 724,0) | - |
| | | | | այդ թվում՝ | | | | |
| | | | | -Պահուստային միջոցներ | 4891 | (85 724,0) | (85 724,0) | |

Հավելված N 4
Երևան քաղաքի ավագանու
2011 թվականի ------------- ---ի
N ---- -Ն որոշման
*Աղյուսակ 2*

# ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2010 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 23-Ի N 169-Ն ՈՐՈՇՄԱՆ N 7 ՀԱՎԵԼՎԱԾԻ N 3 ԱՂՅՈՒՍԱԿՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

*(հազար դրամներով)*

| Տողի NN | Բաժին | Խումբ | Դաս | Բյուջետային ծախսերի գործառական դասակարգման բաժինների, խմբերի և դասերի, ինչպես նաև բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների անվանումները | Հոդված NN | Ընդամենը | այդ թվում՝ (ավելացումները նշված են դրական նշանով, իսկ նվազեցումները փակագծերում) | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | | վարչական բյուջե | ֆոնդային բյուջե |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 |
| | | | | ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ | | 33 000,0 | 33 000,0 | - |
| 2900 | 09 | 0 | 0 | ԿՐԹՈՒԹՅՈՒՆ | | 33 000,0 | 33 000,0 | - |
| | | | | այդ թվում՝ | | | | |
| 2910 | 09 | 1 | 0 | *Նախադպրոցական և տարրական ընդհանուր կրթություն* | | 33 000,0 | 33 000,0 | - |
| | | | | որից՝ | | | | |
| 2911 | 09 | 1 | 1 | Նախադպրոցական կրթություն | | 33 000,0 | 33 000,0 | - |
| | | | | այդ թվում՝ | | | | |
| | | | | *1. Նախադպրոցական ուսուցում* | | *33 000,0* | *33 000,0* | - |
| | | | | -Սուբսիդիաներ ոչ ֆինանսական պետական (համայնքային) կազմակերպություններին | 4511 | 33 000,0 | 33 000,0 | - |

Հավելված N 4
Երևան քաղաքի ավագանու
2011 թվականի ------------- ---ի
N ---- -Ն որոշման
*Աղյուսակ 3*

# ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2010 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 23-Ի N 169-Ն ՈՐՈՇՄԱՆ N 7 ՀԱՎԵԼՎԱԾԻ N 10 ԱՂՅՈՒՍԱԿՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

*(հազար դրամներով)*

| Տողի NN | Բաժին | Խումբ | Դաս | Բյուջետային ծախսերի գործառական դասակարգման բաժինների, խմբերի և դասերի, ինչպես նաև բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների անվանումները | Հոդված NN | Ընդամենը | այդ թվում՝ (ավելացումները նշված են դրական նշանով, իսկ նվազեցումները փակագծերում) | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | | վարչական բյուջե | ֆոնդային բյուջե |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 |
| | | | | ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ | | 23 004,0 | 23 004,0 | - |
| 2900 | 09 | 0 | 0 | ԿՐԹՈՒԹՅՈՒՆ | | 23 004,0 | 23 004,0 | - |
| | | | | այդ թվում՝ | | | | |
| 2910 | 09 | 1 | 0 | *Նախադպրոցական և տարրական ընդհանուր կրթություն* | | 23 004,0 | 23 004,0 | - |
| | | | | որից՝ | | | | |
| 2911 | 09 | 1 | 1 | Նախադպրոցական կրթություն | | 23 004,0 | 23 004,0 | - |
| | | | | այդ թվում՝ | | | | |
| | | | | *1. Նախադպրոցական ուսուցում* | | *23 004,0* | *23 004,0* | - |
| | | | | -Սուբսիդիաներ ոչ ֆինանսական պետական (համայնքային) կազմակերպություններին | 4511 | 23 004,0 | 23 004,0 | - |

Հավելված N 4
Երևան քաղաքի ավագանու
2011 թվականի ------------- ---ի
N ---- -Ն որոշման
*Աղյուսակ 4*

# ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2010 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 23-Ի N 169-Ն ՈՐՈՇՄԱՆ N 7 ՀԱՎԵԼՎԱԾԻ N 12 ԱՂՅՈՒՍԱԿՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

*(հազար դրամներով)*

| Տողի NN | Բաժին | Խումբ | Դաս | Բյուջետային ծախսերի գործառական դասակարգման բաժինների, խմբերի և դասերի, ինչպես նաև բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների անվանումները | Հոդված NN | Ընդամենը | այդ թվում՝ (ավելացումները նշված են դրական նշանով, իսկ նվազեցումները փակագծերում) | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | | վարչական բյուջե | ֆոնդային բյուջե |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 |
| | | | | ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ | | 14 000,0 | 14 000,0 | - |
| 2900 | 09 | 0 | 0 | ԿՐԹՈՒԹՅՈՒՆ | | 14 000,0 | 14 000,0 | - |
| | | | | այդ թվում՝ | | | | |
| 2910 | 09 | 1 | 0 | *Նախադպրոցական և տարրական ընդհանուր կրթություն* | | 14 000,0 | 14 000,0 | - |
| | | | | որից՝ | | | | |
| 2911 | 09 | 1 | 1 | Նախադպրոցական կրթություն | | 14 000,0 | 14 000,0 | - |
| | | | | այդ թվում՝ | | | | |
| | | | | *1. Նախադպրոցական ուսուցում* | | *14 000,0* | *14 000,0* | - |
| | | | | -Սուբսիդիաներ ոչ ֆինանսական պետական (համայնքային) կազմակերպություններին | 4511 | 14 000,0 | 14 000,0 | - |